ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ N «ՀՀ ՄՆ ՄԾԻԳ-ԲԸԱՇՁԲ-15/48-2» ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

ք. Երևան «23» «10» 2019 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար՝ Ն. Հարությունյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Կոտայքնախագիծ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Վարդանյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, (երկուսը միասին այսուհետ՝ Կողմեր) հիմք ընդունելով 2015թ հունիսի 1-ին կնքված պետության կարիքների համար կապալային աշխատանքների կատարման պետական գնման N «ՀՀ ՄՆ ՄԾԻԳ-ԲԸԱՇՁԲ-15/48-2» պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.4-րդ կետը կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

## 1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2019 թվականի օգոստոսի 22-ի «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեում վերաբաշխում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի N 1515-Ն որոշման մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու և Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը թույլտվություն տալու մասին» N 1082-Ն որոշման 2-րդ կետի 3-րդ ենթակետը և Պայմանագրի 5.1.1 կետը՝ Կողմերը, փոխադարձ համաձայնությամբ որոշեցին Պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունը.

1.1.1 Սահմանել, որ սույն համաձայնագրով նախատեսված աշխատանքների ընդհանուր գինը կազմում է 10761165 (տասը միլիոն յոթ հարյուր վաթսունմեկ հազար մեկ հարյուր վաթսունհինգ) ՀՀ դրամ: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

1.1.2 Հաստատել աշխատանքների կատարման ծավալաթերթ-նախահաշիվը համաձայն սույն համաձայնագրի թիվ 1 հավելվածի:

1.1.3 Սույն համաձայնագրով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետը սահմանել համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո 60-րդ օրացուցային օրը:

1.1.4 Հաստատել սույն համաձայնագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները համաձայն թիվ 2 հավելված օրացուցային գրաֆիկի:

1.1.5 Հաստատել սույն համաձայնագրով նախատեսված աշխատանքների կատարման դիմաց վճարման ժամանակացույցը համաձայն թիվ 3 հավելվածի:

1.1.6 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները ներկայացված են համաձայնագրի թիվ 4 հավելվածում:

## 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև պարտավորությունների լրիվ կատարումը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված Պայմանագրով ստանձնած Կողմերի իրավունքներն ու պարտականությունները, աշխատանքների հանձնման-ընդունման հետ կապված և այլ հարաբերությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.4 Սույն համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, կազմված է 2 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն համաձայնագրի թիվ 1, թիվ 2, թիվ 3 և թիվ 4 հավելվածները համարվում են համաձայնագրի անբաժանելի մասը:

## 3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ և ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Հասցեն՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2,
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011018927
ՀՎՀՀ 02698732

Գլխավոր քարտուղար՝ ________________ Ն. Հարությունյան
(ստորագրություն)

Կ.Տ

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

«Կոտայքնախագիծ» ՍՊԸ
Հասցեն՝ ՀՀ կոտայքի մարզ, ք. Աբովյան, Բարեկամության 2.
հեռ.՝ (0222) 2-54-44, 096-78-80-08
էլ. փոստ՝ kotaykproekt@rambler.ru
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ, «Աբովյան» մասնաճյուղ
Հ/Հ 163088121476
ՀՎՀՀ 03503627

Տնօրեն՝ ________________ Ա. Վարդանյան
(ստորագրություն)

Կ.Տ

*Հավելված թիվ 1*
*«23» «10» 2019 թ. կնքված*
*N 2 համաձայնագրի*

# ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

## ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՀՆԱԲԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԴՎԻՆ ՀՆԱՎԱՅՐԻ ՃԵՄՈՒՂԻՆԵՐԻ, ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ, ՄՈՒՏՔԱՅԻՆ ՀԱՏՎԱԾՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ՀՈՒՇԱՐՁԱՆԱՊԱՏԿԱՆ ԲԵԿՈՐՆԵՐԻ ՑՈՒՑԱԴՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

Հազար դրամ

| N | Աշխատանքների տեսակները և անվանումը | Չ/Մ | Քանակ | Միավորի գինը | Գումարը |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| | **Վերականգնողական աշխատանքներ** | | | | |
| | **Ա. Քաղաքատեղի** | | | | |
| 2 | Հողի շերտի կտրում ձեռքի գործիքներով հնագետի ներկայությամբ 2-րդ կարգի գրունտներում | մ³ | 56.7 | 5.00 | 283.500 |
| 3 | Գրունտի տոփանում խճով | 100մ² | 2.5 | 50.00 | 122.832 |
| 4 | Ավազի նախապատրաստական շերտ տոփանումով 7սմ ահաստությամբ | մ³ | 24.48 | 6.40 | 156.672 |
| 5 | Հողի հետլիցք տոփանուփվ | մ³ | 2.3 | 20.00 | 46.800 |
| 6 | Բետոնե սալերի շար 70x70x7սմ հաստությամբ 3սմ արանքով | 100մ² | 4.6 | 1,790.00 | 8,200.885 |
| 7 | Բետոնե սալերի կտրում | մ | 21.8 | 1.00 | 21.760 |
| 8 | Ե/բ սալերի լրացուցիչ տեղափոխում մոտավորապես 120մ հեռավորության վրա | տ | 68.11 | 3.00 | 204.336 |
| | **Բ. Թանգարանային մաս** | | | | |
| 1 | Գոյություն ունեցող բետոնե սալերի քանդում հեռացում | մ² | 5.0 | 1.00 | 5.000 |
| 2 | Թանգարանի ներքին հարթակի հողի քնդում հեռացում ձեռքի գործիքներով հնագետի ներկայությամբ 2-րդ կարգի գրունտներում | մ³ | 1.54 | 2.30 | 3.542 |
| 3 | Բետոնի նախապատրաստական շերտ միջինը 10սմ հաստությամբ | մ³ | 2.28 | 50.30 | 114.684 |
| 4 | Ցեմենտ ավազե հարթեցնող շերտ 4սմ հաստությամբ սալահատակի և աստիճանահարթակի տակ | մ² | 12.70 | 2.60 | 33.020 |
| 5 | Բազալտե սալիկներով սալահատակի իրականացում 3սմ հաստությամբ | մ² | 5.70 | 19.60 | 111.720 |
| 7 | Ազբեստի կիսախողովակի տեղադրում փ28 սմ տրամագծով | գծմ | 3.19 | 4.30 | 13.717 |
| 8 | Նույն խողովակի կտրում երկու կողմից | մ | 3.19 | 2.10 | 6.699 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 9 | Ազբեստի կիսախողովակի տակ բետոնի նախապատրաստական շերտ միջինը 15սմ հաստությամբ | մ³ | 0.45 | 50.50 | 22.725 |
| 10 | Բուտաբետոնից հենապատի պատրաստում B 12,5 դասի գոյություն ունեցողի վրա | մ³ | 1.19 | 45.06 | 53.621 |
| 11 | Հենապատի երեսապատում 3սմ հաստությամբ բազալտե սալիկներով | մ² | 1.26 | 27.30 | 34.398 |
| 12 | Բեկորների ցուցադրության համար հենապատի վրա 7 սմ հաստությամբ բազալտի վերադիրների նոր տաղ ու շար 80-100 սմ լայնությամբ | մ² | 1.90 | 71.83 | 136.477 |
| 13 | Հենապատի վրա 7 սմ հաստությամբ բազալտի վերադիրների նոր տաղ ու շար 34 սմ լայնությամբ | մ² | 0.75 | 84.30 | 63.225 |
| 14 | Թանգարանի դիմաց աստիճանների տակ բուտաբետոնի լիցք | մ³ | 0.3 | 41.88 | 12.564 |
| | **Գ. Միջնադարի մուտք** | | | | |
| 17 | Հողի և շին աղբի բարձում ձեռքի գործիքներով ավտոմեքենաները 10% | մ³ | 4.0 | 1.90 | 7.600 |
| 18 | Նույնը մեխանիզմով | մ³ | 0.3 | 100.00 | 27.200 |
| 19 | Նույնի տեղափոխում մեքենաներով 5կմ հեռ վրա | տ | 55.5 | 1.80 | 99.900 |
| | **Ընդամենը** | | | | **9,782.877** |
| | **Շահույթ 10%** | | | | **978.288** |
| | **Ընդամենը** | | | | **10,761.165** |

* Կապալառուն աշխատանքները կատարում է ՀՀ Արարատի մարզի Հնաբերդի համայնքի Դվին հնավայրի տարածքում:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Կ.Տ _______________ **Ն. Հարությունյան**
(ստորագրություն)

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

Կ.Տ _______________ **Ա. Վարդանյան**
(ստորագրություն)

«23» «10» 2019 թ. կնքված N 2 համաձայնագրի Հավելված թիվ 2

# ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

## ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՀՆԱԲԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԴՎԻՆ ՀՆԱՎԱՅՐԻ ՃԵՄՈՒՂԻՆԵՐԻ, ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ, ՄՈՒՏՔԱՅԻՆ ՀԱՏՎԱԾՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ՀՈՒՇԱՐՁԱՆԱՊԱՏԿԱՆ ԲԵԿՈՐՆԵՐԻ ՑՈՒՑԱԴՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

| N | Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ | Աշխատանքների կատարման ժամկետը | |
|---|---|---|---|
| | | Սկիզբը | Ավարտը |
| 1 | Վերականգնողական աշխատանքներ | Համաձայնագիրը ուժի մեջ մտնելու օրվանից | Համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց հետո՝ 60-րդ օրացուցային օրը ներառյալ |
| **ԸՆԴԱՄԵՆԸ** | | **Համաձայնագիրը ուժի մեջ մտնելու օրվանից** | **Համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց հետո՝ 60-րդ օրացուցային օրը ներառյալ** |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

**Ն. Հարությունյան**

(ստորագրություն)

Կ.Տ

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

**Ա. Վարդանյան**

(ստորագրություն)

Կ.Տ

« 23 » « 10 » Հավելված թիվ 3
2019 թ. կնքված
N 2 համաձայնագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Աշխատանքի | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախա-տեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել ՀՀ 2019թ պետական բյուջեից՝ ըստ ամիսների, այդ թվում* | | | |
| | | | հոկտեմբեր | նոյեմբեր | Դեկտեմբեր, մինչև 30-ը | Ընդամենը |
| 1 | 45451600-7 | Վերականգնողական աշխատանքներ (ՀՀ Արարատի մարզի Հնաբերդի համայնքի Դվին հնավայրի ճեմուղիների, գլխավոր հատակագծի, մուտքային հատվածների կազմակերպման և հուշարձանապատկան բեկորների ցուցադրության) | 3 000 000 | 6 000 000 | 10 761 165 | **10 761 165** |

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ** **ԿԱՊԱԼԱՌՈՒ**

_____________ Ն. Հարությունյան
(ստորագրություն)
Կ.Տ

_____________ Ա. Վարդանյան
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված թիվ 4
« 23 » « 10 » 2019 թ. կնքված
N 2 համաձայնագրի

**ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՀՆԱԲԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԴՎԻՆ ՀՆԱՎԱՅՐԻ ՃԵՄՈՒՂԻՆԵՐԻ, ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ, ՄՈՒՏՔԱՅԻՆ ՀԱՏՎԱԾՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ՀՈՒՇԱՐՁԱՆԱՊԱՏԿԱՆ ԲԵԿՈՐՆԵՐԻ ՑՈՒՑԱԴՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻՆ ԵՎ ԿՈՆՍՏՐՈՒԿՑԻԱՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐ**

ՀՀ Արարատի մարզի Հնաբերդի համայնքի Դվին հնավայրի ճեմուղիների, գլխավոր հատակագծի, մուտքային հատվածների կազմակերպման և հուշարձանապատկան բեկորների ցուցադրության աշխատանքների կատարման ընթացքում շինարարական նյութերը ու կոնստրուկցիաները պետք է ունենան երեք տարվա երաշխիքային ժամկետ:

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՊԱԼԱՌՈՒ |
|---|---|
| ______ Ն. Հարությունյան | ______ Ա. Վարդանյան |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ | Կ.Տ |